



ՊՐՏ-ի համար, որը մենք արդեն ունենք կամ հետագայում կստանանք: Մենք կիրառարկվենք գործող Ծանուցման պատճենը: Եթե փոխենք Ծանուցումը, ապա Դուք կարող եք ձեռք բերել վերանայված Ծանուցման պատճենը՝ ըստ պահանջի կամ առցանց՝ <https://corporate.walmart.com/privacy-security/notices/>:

**Լրացուցիչ տեղեկատվության կամ որևէ խնդրի մասին հարցրե՞լու համար.** Եթե Դուք այս Ծանուցման վերաբերյալ հարցեր ունեք, կապվե՛ք՝ HIPAA Compliance, Walmart Inc., 2608 SE J Street, Mailstop 0230, Bentonville, AR. 72716-0230 կամ զանգահարե՛ք (800) WAL-MART: Եթե կարծում եք, որ Ձեր գաղտնիության իրավունքները ոտնահարվել են, կարող եք գրավոր բողոք ներկայացնել (որևէ հաշվեհարդար չի լինի) մեր HIPAA-ի (Բժշկական ապահովագրությունում մատչելիության և հաշվետվողականության վերաբերյալ օրենքի) համապատասխանության աշխատակցին՝ վերը նշված հասցեով, կամ Քաղաքացիական իրավունքների գրասենյակի Առողջության և սոցիալական ծառայությունների վարչության քարտուղարին:

**Հիվանդի իրավունքների հայտարարագիր.** Մատակարարի պարտականությունները. 1. Նախապես ամբողջությամբ տեղեկացված լինել խնամքի/ծառայության մասին, ներառյալ այն բաժինների, որոնք տրամադրում են խնամք, և այցելությունների հաճախականության, ինչպես նաև առողջապահական ծրագրի ցանկացած փոփոխության մասին: 2. Մասնակցել առողջապահական ծրագրի մշակմանը և պարբերական վերանայմանը: 3. Մերժել խնամքը կամ բուժումը, երբ խնամքի կամ բուժման մերժման հանգամանքները ամբողջությամբ ներկայացվել են: 4. Նախապես տեղեկացված լինել տրամադրվող խնամքի, ծախսերի մասին գրավոր կամ բանավոր կերպով, ներառյալ խնամքի/ծառայության վճարումը, որն ակնկալվում է երրորդ կողմից և որևէ այլ ծախս, որի համար հաճախորդը/հիվանդը պատասխանատու կլինի: 5. Արժանանալ սեփական անձի և ունեցվածքի նկատմամբ հարգալից, ուշադիր և հաճախորդի/հիվանդի արժանապատվությունն ու անհատականությունը հաշվի առնող վերաբերմունքի: 6. Հնարավորություն ունենալ հաստատել այցելող անձնակազմի անդամներին պատշաճ նույնականացման միջոցով: 7. Ձերձ լինել ոչ պատշաճ վերաբերմունքից, անտեսումից, կամ բանավոր, հոգեկան, սեռական և ֆիզիկական չարաչափումից, ներառյալ անհայտ աղբյուրից վնասվածքները և հաճախորդի/հիվանդի ունեցվածքի ապօրինի սեփականացումը: 8. Արտահայտել դժգոհություն/բողոք բուժման կամ խնամքի, ունեցվածքի վերաբերյալ հարգանքի պակասի մասին կամ խորհուրդ տալ քաղաքականության, անձնակազմի կամ խնամքի/ծառայության փոփոխությունների մասին՝ առանց սահմանափակման, միջամտության, հարկադրման, խտրականության կամ ճնշամիջոցի: 9. Դժգոհություն/բողոք ներկայացնել տրամադրվող (կամ եթե չի տրամադրվում) բուժման կամ խնամքի կամ հետազոտվող ունեցվածքի նկատմամբ հարգանքի բացակայության վերաբերյալ: 10. Ընտրել առողջապահական ծառայությունների մատակարար, ներառյալ այցելող բժշկի ընտրությունը: 11. Հաճախորդի/հիվանդի գրքային և Պաշտպանված բժշկական տեղեկատվության մեջ պարունակվող ամբողջ տեղեկատվության գաղտնիություն: 12. Տեղյակ լինել գործակալության քաղաքականությունների և ընթացակարգերի վերաբերյալ, որոնք առնչվում են հիվանդանոցային գրառումների տվյալների տրամադրմանը: 13. Առանց խտրականության համապատասխան խնամք ստանալ՝ համաձայն բժշկի կամ ծառայություն տրամադրողի հրահանգների: 14. Տեղյակ լինել ֆինանսական առավելությունների մասին, երբ ուղղորդվում եք որևէ կազմակերպություն: 15. Ամբողջությամբ տեղեկացված լինել Ձեր պարտականությունների մասին: 16. Ստանալ տեղեկատվություն այն ծառայությունների շրջանակի մասին, որը կտրամադրի կազմակերպությունը, և այդ ծառայությունների առանձնահատուկ սահմանափակումների մասին: **Հիվանդի պարտականությունները.** 1. Տրամադրել ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն Ձեր ներկայիս առողջության, դեղամիջոցների, պերգիաների և այլնի վերաբերյալ, երբ դրանք առնչվում են Ձեր խնամքի/ծառայությանը: 2. Ներգրավված լինել, ըստ անհրաժեշտության և կարողության, Ձեր տնային բուժման սպասարկման ծրագրի մշակման, իրականացման և փոփոխման մեջ, ինչպես օրինակ՝ Ձեր սարքավորումների և պարագաների պատշաճ կերպով մաքրումը և պահպանումը: 3. Պատշաճ կերպով մաքրել և պահպանել սարքավորումները և պարագաները: 4. Կապվել մեզ հետ որևէ հարցի կամ խնդրի վերաբերյալ, որոնք առնչվում են սարքավորումներին, պարագաներին կամ ծառայությանը: 5. Ծանուցել Ձեզ այցելող բժշկին կամ մատակարարին, երբ հիվանդ եք: 6. Նախապես մեզ ծանուցել Ձեր բնակության վայրի կամ Ձեր հեռախոսահամարի փոփոխության վերաբերյալ: 7. Ծանուցել մեզ, երբ սարքավորումների կամ ծառայության հետ կապված որևէ խնդրի եք հանդիպում: 8. Ծանուցել մեզ, եթե բժիշկը կամ այլ մատակարարը փոխում կամ դադարեցնում է Ձեր դեղատոմսը: 9. Ծանուցել մեզ մեր գաղտնիության քաղաքականության սահմանափակման և/կամ մերժման մասին:

**Հաճախորդի մտահոգությունները. Դուք կարող եք կապվել մեզ հետ՝ (800) WAL-MART:** Բողոքն ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում Ձեզ հետ կկապվենք հեռախոսով, էլ. փոստով, ֆաքսով կամ նամակով՝ տեղեկացնելու, որ ստացել ենք Ձեր բողոքը: 14 օրացուցային օրվա ընթացքում մենք կտրամադրենք Ձեր հարցման արդյունքների վերաբերյալ գրավոր ճանուցումը և որոշումը: Դուք կարող եք զանգահարել (800) WAL-MART, եթե մտահոգություն ունեք որևէ չարաչափման և խարդախության կամ մեր կազմակերպության կողմից տրամադրված բուժման կամ ծառայությունների մասին, կամ կարող եք կապվել Առողջապահության հավատարմագրման հանձնաժողովի հետ (ACHC-ԱՀՀ) (919) 785-1214 կամ (855) 937-2242 հեռախոսահամարներով, եթե Ձեր բողոքը չի լուծվել: Դուք կարող եք նաև զանգահարել Գլխավոր տեսուչի գրասենյակ նշված հեռախոսահամարով՝ 1-(800) 447-8477:

**Medicare DMEPOS-ի մատակարարի ստանդարտները.** Wal-Mart Stores, Inc.-ի կողմից Ձեզ տրամադրվող ապրանքները և/կամ ծառայությունները ենթարկվում են Դաշնային կանոնակարգերում պարունակվող մատակարարի ստանդարտներին, ինչպես ցուցադրված է Դաշնային կանոնակարգերի 424.57(գ) բաժնի 42-րդ օրենսգրքում: Այս ստանդարտները վերաբերում են բիզնես մասնագիտական և գործառնական հարցերին (օրինակ՝ երաշխիքները հաշվի առնելը և գործողությունների ժամերը): Այս ստանդարտների ամբողջական տեքստը հասանելի է [www.ecfr.gov](http://www.ecfr.gov) կայքում: Ըստ պահանջի՝ մենք Ձեզ կտրամադրենք ստանդարտների գրավոր պատճենը:

**Տեղեկություններ երաշխիքի վերաբերյալ.** Մեր ընկերության կողմից վաճառված կամ վարձակալված ցանկացած ապրանք կրում է արտադրողի մեկ տարվա երաշխիք: Մենք կծանուցենք Medicare-ի բոլոր շահառուներին երաշխիքային ծածկույթի մասին, հաշվի կառնենք գործող օրենքով առկա բոլոր երաշխիքները, անվճար կվերանորոգենք կամ կփոխարինենք երաշխիքի ներքո գտնվող Medicare-ում ներառված սարքավորումները: Բացի այդ, շահառուներին կտրամադրվի շահագործման ձեռնարկ բոլոր երկարատև օգտագործման բժշկական սարքավորումների համար նախատեսված երաշխիքային տեղեկատվությամբ, երբ այդ ձեռնարկը հասանելի լինի: